ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՎԱԽԸ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՀՈԲ 3.25

25 *Որովհետև այն, ինչից ես ամենից շատ էի վախենում, եկավ ինձ վրա, և այն, ինչից սարսափում էի, պատահեց ինձ:*

- *Վախը սատանայի ամենահին զենքերից մեկն է:*

  Վախը Իսրայելին հետ պահեց Ավետյաց երկիր մտնելուց:

  Վախը ստիպեց Պետրոսին ուրանալ Հիսուսին:

  Վախը աշակերտներին փակեց վերնատանը Հիսուսի խաչելությունից հետո:

  Այնուամենայնիվ, Հիսուսը կրկին ու կրկին ասում էր.

  «Մի՛ վախեցեք»:

*Աստվածաշնչում հարյուրավոր անգամներ հանդիպում է **«մի՛ վախեցիր»** հրամանը, որովհետև վախը կարող է դառնալ բանտ, որը մարդուն հեռացնում է Աստծուն վստահելուց:*

Հռոմեացիներին 16.20 – Եվ խաղաղության Աստվածը թող շուտով սատանային ձեր ոտքերի տակ խորտակի: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը ձեզ հետ լինի. Ամեն:

ԻՆՉ ՎԱԽԻ ՄԱՍԻՆ Է ԽՈՍՈՒՄ ՅՈԲԸ

25 *Որովհետև այն, ինչից ես ամենից շատ էի վախենում, եկավ ինձ վրա, և այն, ինչից սարսափում էի, պատահեց ինձ:*

Յոբ 3.25-ում օգտագործված եբրայերեն բառը ***«պախադ» (פַּחַד)*** *է:*

Այն նշանակում է.

Սարսափահ, խոր տագնապ, մշտական ներքին, անհանգստություն

Հետաքրքիր է, որ Յոբ 1-րդ գլխում տեսնում ենք, թե ինչպես էր Յոբը շարունակ զոհ մատուցում իր երեխաների համար՝ ասելով.

«<u>Գուցե</u> իմ որդիները մեղք են գործել...»

Յոբը Աստծուց հեռացած մարդ չէր: Նա արդար մարդ էր: Նա սիրում էր Աստծուն:

Սակայն նրա սրտում վախը կամաց-կամաց դարձել էր մշտական ուղեկից:

Նա կարծես մշտապես սպասում էր դժբախտության:

- *Երբ փորձությունը եկավ, նա ասաց.*

  «Այն, ինչից ես վախենում էի, եկավ ինձ վրա»:

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՆՉ ՎԱԽԻ ՄԱՍԻՆ Է ԽՈՍՎՈՒՄ

- *Նոր Կտակարանում «վախ» բառի հիմնական հունարեն բառը **φόβος (ֆոբոս)** է:*

  Ա Հովհաննես 4.18 – Սիրո մեջ վախ չկա. կատարյալ սերը հեռացնում է վախը, որովհետև վախի մեջ տանջանք կա: Եվ ով վախենում է, սիրո մեջ կատարյալ չէ:

  *Այստեղից էլ առաջացել է անգլերեն **Phobia** բառը:*

  Հովհաննեսը խոսում է դատաստանի և պատժի վախի մասին:

  Երբ մարդը ճանաչում է Աստծո կատարյալ սերը, այլևս չի ապրում մերժման և դատաստանի վախի մեջ:

- *Հունարեն մեկ այլ բառ, որը թարգմանվում է որպես «վախ», **«δειλία» (դեյլիա)** բառն է:*

  Բ Տիմոթեոս 1.7 – Որովհետև Աստված մեզ երկչոտության հոգի չտվեց, այլ զորության, սիրո և ողջամտության:

  > *Այս բառը նկարագրում է. Վախ, խուճապ, սարսափ, հոգեկան տագնապ...*
  >
  > *Հովհաննեսը խոսում է դատաստանի և պատժի վախի մասին:*

ՈՒՐԵՄՆ ԻՆՉ ՎԱԽ ՈՒՆԵՐ ՀՈԲԸ

Հոբը պայքարում էր. Տագնապի, սարսափի, աղետի սպասման, ներքին անհանգստության դեմ...

*Նա ապրում էր **ֆոբոսի** կամ **դեյլիայի** տանջող վախի իշխանության տակ, որովհետև Քրիստոսը մեզ ազատել է դրանցից:*

ԻՆՉՊԵՍ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՎԱԽԸ

1. *Վախը փոխարինիր Աստծո բնավորության հանդեպ վստահությամբ:*

Եսայիա 41.10 – Մի՛ վախեցիր, որովհետև Ես քեզ հետ եմ...

ՀԻՇԻՐ. Վախը կենտրոնանում է խնդրի վրա, իսկ Հավատը կենտրոնանում է Աստծո ներկայության վրա:

Աստված Իսրայելին չասաց.

«Ես բոլոր հսկաներին կվերացնեմ»:

Նա ասաց. Ես քեզ հետ եմ:

Օրինակ. Փոքր երեխան փողոց է անցնում հոր ձեռքը բռնած:

ԿԱՏԱՐՅԱԼ ՍԵՐԸ ՎԱՆՈՒՄ Է ՎԱԽԸ

Հռոմեացիներ 8.38-39 – Ոչինչ չի կարող ինձ բաժանել Քրիստոսի սիրուց:

Ոչ մահը, ոչ կյանքը, ոչ հրեշտակները, ոչ իշխանությունները, ոչ մի բան չի կարող մեզ բաժանել Աստծո սիրուց:

Երբ հասկանում ենք, թե Ով է մեր Հայրը, վախը կորցնում է իր իշխանությունը:

ՀԱՎԱՏՈՎ ԳՈՐԾԻՐ՝ ՆՈՒՅՆԻՍԿ ԵՐԲ ՎԱԽ ԿԱ

- ***Աստվածաշնչյան օրինակներ***

  Բ Մնաց. 20.2-3 – Ոմանք եկան և տեղեկացրին Հոսափատին՝ ասելով. Քեզ վրա մեծ բազմություն է գալիս ծովի այն կողմից՝ Ասորիքից, և ահա նրանք Ասասանթամարում են, այսինքն՝ Ենգադդիում: Հոսափատը վախեցավ, երեսն ուղղեց դեպի Տերը՝ փնտրելու նրան, և ծոմապահություն հայտարարեց ամբողջ Հուդայում:

  Գ Թագ. 19.2-3 – Եվ Հեզաբելը պատգամավոր ուղարկեց Եղիայի մոտ՝ ասելով. Աստվածներն ինձ այսպես անեն և սրանից էլ ավելին անեն, եթե վաղն այս ժամանակ քո անձը նրանցից մեկի անձի տեղը չդնեմ: Եվ այդ ԼՍԵԼՈՎ՝ վեր կացավ գնաց իր անձն ազատելու և հասավ Հուդայի Բերսաբ. և իր ծառային թողեց այնտեղ:

  - *Հեսուն դեռ պետք է անցներ Հորդանանը:*

    Հեսու 1 – Աստված երեք անգամ ասում է. «Զորացի՛ր և քաջացի՛ր»:

- *Դավիթը դեռ պետք է հանդիպեր Գողիաթին:*

  Որ օրը որ վախենամ, հույսս քեզ վրա պիտի դնեմ (Քեզ պիտի վստահեմ) Սաղմոս 56.3:

- *Պետրոսը դեռ պետք է դուրս գար նավակից:*

  Մատթեոս 14.27-33 – Հիսուսն իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. Քաջալերվե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք: Պետրոսը նրան ասաց. Տե՛ր, <u>եթե</u> դու ես, հրամայի՛ր ինձ ջրի վրայով քեզ մոտ գալ: Իսկ նա ասաց՝ ե՛կ: Եվ Պետրոսը, նավից իջնելով, քայլեց ջրի վրայով և Հիսուսի մոտ եկավ: Սակայն սաստիկ քամին <u>ՏԵՍՆԵԼՈՎ</u>՝ <u>վախեցավ</u> և երբ սկսեց սուզվել, աղաղակեց ու ասաց. Տե՛ր, փրկի՛ր ինձ: Հիսուսն իսկույն ձեռքը մեկնեց, բռնեց նրան և ասաց. Թերահավա՛տ, ինչո՞ւ երկմտեցիր: Երբ նրանք նավ մտան, քամին հանդարտվեց: Նավի վրա եղողները <u>երկրպագեցին</u> նրան ու ասացին. Իսկապես <u>Դու Աստծու Որդին ես:</u>

  Այսօր հարցրու ինքդ քեզ. Ի՞նչ վախ է այսօր փորձում ղեկավարել իմ կյանքը:

  ձախողման վա՞խ, մերժման վա՞խ, հիվանդության վա՞խ, ֆինանսական խնդիրների վա՞խ, մահվան վա՞խ, ապագայի վա՞խ...

  ՀԻՇԻՐ. Վախը միշտ հարցնում է. «Իսկ եթե...» Հավատը պատասխանում է. «Բայց Աստված...»

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Հոբը մեզ ցույց է տալիս, թե ինչ տեսք ունի վախը: Հիսուսը մեզ ցույց է տալիս, թե ինչպես հաղթել այն:

Սաղմոս 27.1 – Տերն է իմ լույսն ու իմ փրկությունը. ո՞ւմից պիտի վախենամ: Տերն է իմ կյանքի ամրոցը. ո՞ւմից պիտի սարսափեմ:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: